ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առկա իրավիճակը

Մարաղան քաղաքատիպ ավան է, որը գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանում՝ ադրբեջանի Թերթերի (Միրբաշիր) շրջանի հետ սահմանին: Ըստ 1989 թ. բնակչության մարդահամարի՝ ավանում բնակվում էր 4660 մարդ: 1992 թ. ապրիլից մինչ օրս ավանը գտնվում է ադրբեջանի վերահսկողության ներքո:

1992 թ. ապրիլի 10-ին տևական հրետակոծումից հետո ադրբեջանական զինված ստորաբաժանումները ներխուժել են Մարաղա, ուր Հայ աշխարհազորայինների փոքրաթիվ ջոկատին թեև հաջողվել էր Մարաղայից տարհանել բնակիչների մեծ մասին, բայց մոտ 118 անձ՝ հիմնականում տարեցներ, հաշմանդամներ, կանայք և երեխաներ, դեռ մնացել էին բնակավայրում: Նրանցից շատերը դաժանաբար խոշտանգվել, ապա սպանվել են ադրբեջանական բանակի զինվորների կողմից: Այդ ռազմական հանցագործությանը զոհ գնաց ավելի քան 50 մարդ[1], այդ թվում՝ 30 կին:

Ինչպես վկայում է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ և պալատի նախկին փոխխոսնակ, իրավապաշտպան բարոնուհի Քերոլայն Քոքսը[2], ով ողբերգությունից անմիջապես հետո «Christian Solidarity Worldwide» կազմակերպության մի խումբ ներկայացուցիչների հետ այցելել էր ավան, Մարաղայի գազանաբար սպանված բնակիչների մարմիններն անդամահատված էին, այլանդակված և հրկիզված: Բարոնուհի Քոքսը Մարաղան անվանել է «ժամանակակից Գողգոթա, միայն թե՝ շատ ավելի սարսափելի»:

Շուրջ 50 մարդ, այդ թվում՝ 9 երեխա և 29 կին, պատանդ են վերցվել: Նրանց մի մասին, այդ թվում բոլոր երեխաներին, հետագայում հաջողվել է վերադարձնել, սակայն 19 պատանդների ճակատագիրն առ այսօր անհայտ է:

Երկու շաբաթ անց Մարաղան երկրորդ գրոհին է ենթարկվել, որի ընթացքում իրենց հարազատներին հուղարկավորելու համար Մարաղա վերադարձած բնակիչներն ադրբեջանական բանակի նոր վայրագությունների զոհն են դարձել:

Մարաղայի վրա հարձակումը պայմանավորված չի եղել ռազմական անհրաժեշտությամբ. այն բացառապես ուներ Մարաղայի Հայ խաղաղ բնակչության ոչնչացման նպատակ: Մարաղայի ոճրագործությունը շարունակությունն էր Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի և ադրբեջանի այլ բնակավայրերի, ինչպես նաև Արցախի գյուղերում հայկական բնակչության՝ կազմակերպված և զանգվածային ջարդերի ու տեղահանության:

Մարաղայի ջարդերի ու դրանց աննախադեպ դաժանության մասին փաստում է նաև Թոմաս դե Վալը իր՝ «Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջև» աշխատության մեջ:[3]

Մարաղայի ջարդերի կազմակերպիչները չեն պատժվել, ավելին՝ ջարդերի կազմակերպիչ, «Գուրթուլուշ» գումարտակի հրամանատար Շահին Թալիբ օղլի Թագիևը Ադրբեջանի նախագահի 23.06.1993թ. թիվ 6 հրամանով ստացել է «ադրբեջանի Ազգային Հերոս» կոչում:

Այս հանցագործությունների կազմակերպիչների և իրագործողների անպատժելիությունը պարարտ հող ստեղծեց Ադրբեջանում հայերի նկատմամբ ատելության որպես պետական քաղաքականություն արմատավորման և այլատյացության, անհանդուրժողականության ու ռազմամոլության անսանձ քարոզչության համար, ինչն էլ առավել քան ցայտուն դրսևորվեց թե՛ 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի վրա հարձակումով, թե՛ առ այսօր ադրբեջանի կողմից շարունակվող այլ հայատյաց դրսևորումներով:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է «ՀՀ Տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում սահմանել Մարաղա գյուղի խաղաղ բնակչության ջարդի զոհերի հիշատակի օր՝ զոհերի հիշատակը հարգելու և մարդկության ու համամարդկային արժեքների դեմ ուղղված այդ հանցավոր արարքին գնահատական տալու համար: Որպես հիշատակի օր առաջարկվում է սահմանել Մարաղայի վրա ադրբեջանական զորքերի հարձակման օրը՝ ապրիլի 10-ը:

---

1 Amnesty International. «Azerbaydzhan: Hostages in the Karabakh conflict: Civilians Continue to Pay the Price», April 1993 (POL 10/01/93), p.9.

Human Rights Watch/Helsinki (1994). «Azerbaijan: Seven years of conflict in Nagorno Karabakh». New York: Human Rights Watch. p.6. ISBN 1-56432-142-8.

2 https://www.youtube.com/watch?v=IuX-AK-168E

3 http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4673000/4673953.stm